



Խմբագրատան հասցէ՝

Պէյրուզ. Նահր Իպրահիմ փ.,
Թէքէէն Կեդրոն, 2-րդ յարկ, Ժըմմէյզի

Երեւան. Մամուլի շէնք, Հիմնական
Մասնաշէնք, 2-րդ յարկ, 213ա,
Արշակունեաց 2

Երկուշաբթի / 10.05.2021

84րդ Տարի, թիւ 83 (22,438)

1500 Լ.Ո. / 8 Էջ

@ zartonkadl@gmail.com

+961 1 444225
+961 81 306 447

www.zartonkdaily.org
facebook.com/zartonkdaily

P.O.BOX 11-617 Beirut-Lebanon

Լիբանանեան Լուրեր

Լիբանան Ուժ Կրնայ Ստանալ Իր Ժողովուրդէն. Ֆրանսայի ԱԳՆ



Ֆրանսայի Արտաքին գործոց Նախարարը զօրակցական ակնարկ մը յղեց Լիբանանի ժողովուրդին ըսելով, որ Լիբանան իր ուժը կը ստանայ իր ժողովուրդէն: Մինչ ան վեր կ'առնէր Լիբանանի ժողովուրդին բարեմասնութիւնները, քննադատութիւն չխնայեց Լիբանանի քաղաքական ղեկավարներուն հանդէպ, որոնք պատասխանատու

գտաւ երկրին ճախողութեան:

Այս խօսքերը եղան Ֆրանսայի ԱԳՆ Պէյրուզ արագ այցելութեան ընթացքին, ուր ան այցելեց խթանելու կառավարութեան կազմութիւնը, որ տակաւին կ'ուշանայ:

Շրջանային Լուրեր

Երուսաղէմի Մէջ Լարուած Իրավիճակ

Երուսաղէմի մէջ լարուած իրավիճակ էր երեկ, որուն ընթացքին տուժածներու թիւը աւելցած է եւ հասած 163-ի:


TACC-ի հաղորդմամբ՝ Իսրայէլի ոստիկանութիւնը յայտնած է պաղեստինցիներու հետ բախման հետեւանքով 6 տուժած ոստիկանի մասին:

Առնուազն 53 պաղեստինցի ալ վիրաւորուած էին Ուրբաթ, Երուսաղէմի Ալ-Աքսա մզկիթի մօտ իսրայէլական ոստիկանութեան հետ բախումներու ժամանակ:

Կը հաղորդուի, որ իրաւապահները ռետինէ փամփուշտներով կրակ բացած են մզկիթի ծխական համայնքի ուղղութեամբ, ինչպէս նաեւ օգտագործած են ձայնային նռնակներ: Ականատեսներու խօսքով՝ 23 մարդ հիւանդանոց տեղափոխուած է: Տասնեակ մարդիկ բերման ենթարկուած են:



Քորոնավիրուսի Օրագիր Գրանցուած Վարակակիրներ



ՈՒՂԵՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ուղերձը Յաղթանակի Եւ Խաղաղութեան Տօնի, Շուշիի Ազատագրութեան Եւ Արցախի Պաշտպանութեան Բանակի Հիմնադրման Օրերի Առիթով

Սիրելի հայորդիներ,
Մայիսի 9-ի նուիրական այս օրը վերաթելորում ենք մեր ժողովրդի ներդրած անմաքոր ջանքերը, որոնք նպաստեցին Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի եւ բռնութեան դէմ յաղթանակի կերտմանը եւ աշխարհում խաղաղութեան հաստատմանը: Արցախեան հերոսամարտում Շուշիի ազատագրման եւ Արցախի բանակի կազմաւորման խորհրդանշական այս նոյն օրը, սակայն, անդադարաւորում ենք նաեւ անցեալ տարի Ադրբեյջանի սանձազերծած պատերազմի ողբերգական հետեւանքներին: Ադրբեյջանի կողմից շարունակուող եւ խաղաղ բնակչութեան դէմ ոստիկանութիւնները, անմարդկային խոշտանգումներին եւ ենթարկուող գերութեան մէջ գտնուող մեր զինուորականներն ու քաղաքացիական անձինք, հետեւողականօրէն ոչնչացուող է հայկական հոգեւոր ու մշակութային բազմադարեայ ժառանգութիւնը Արցախում: Սիրելի ժողովուրդ, այսօր առկայ նոր մարտահրաւերներին յանդիման մեզ համար իրամայական է հայոց բանակի զօրացումը, որ երաշխաւորն է մեր հայրենիքի անվտանգութեան ու մեր խաղաղ կեանքի: **Շար. Էջ 02**



Հայկական Լուրեր

Մայիս 9-ի «Յաղթանակի Օրուան» Առթիւ Վատիկանի Փութինի Ուղերձը Սարգսեանին

Հայրենական մեծ պատերազմի յաղթանակի 76-ամեակի առթիւ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Արմէն Սարգսեանին շնորհաւորական ուղերձ յղած է Ռուսաստանի Ղաշնութեան Նախագահ՝ Վատիկանի Փութին: Ինչպէս տեղեկացուցին Հայաստանի Հանրապետութեան Նախագահի աշխատակազմի հասարակայնութեան հետ կապերու վարչութիւնէն, ուղերձով ըսուած է.

«Յարգելի Արմէն Վարդանի, Սրտանց կը շնորհաւորեմ ձեզ Հայրենական մեծ պատերազմի յաղթանակի 76-ամեակի առթիւ:

Նշելով այս տօնը՝ մեր մեծարանքի տուրքը կը մատուցենք մեր պապերուն ու հայրերուն, որոնք հսկայական զոհերու ու զոհանքներու գնով ջախջախեցին նացիստական յարձակողները:

Համոզուած եմ, որ պատերազմի տարիներուն կոփուած փոխօգնութիւնն ու բարեկամական կապերը հետագային եւս յուսալի հիմք կը ծառայեն հայ-ռուսական դաշնակցային յարաբերութիւններու զարգացման համար:

Կը խնդրեմ քաջամոռոյցութեան ու բարօրութեան մաղթանքներս փոխանցել հայկական հողին վրայ ապրող բոլոր վերերաններուն:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայիսի 9-ը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Մայիսի 9-ին՝ Յաղթանակի ու խաղաղության տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը Սուրբ Պատարագի արարողությունը մասնակցեց Սուրբ Գայիանէ վանքում: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգեան հոգեւոր ձեմարանի տեսուչ Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամեանը:



Հայր Սուրբը, իր քարոզում անդրադառնալով օրուայ խորհրդին, ի մասնաւորի նշեց. «Այսօր մայիսի 9-ն է՝ մեր յաղթանակների եռատօնը, երբ յիշատակում ենք յաղթանակը Հայրենական մեծ պատերազմում, Շուշիի ազատագրումը եւ Արցախի պաշտպանութեան բանակի ստեղծման տարեդարձը: Այսօր, սակայն, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմը հեռաւոր մի իրականութիւն է նոր սերնդի համար, երբ Շուշին գտնւում է թշնամու վերահսկողութեան տակ, իսկ Արցախի Պաշտպանութեան բանակի հետագայ ճակատագիրը մշուշոտ է, թւում է, անհնար է խօսել յաղթանակների մասին: Սակայն հենց այս մռայլ օրերին է, որ աւելիով կարիքն ունենք լսելու յաղթանակի պատգամը եւ յիշատակելու յաղթանակի այն ոգին, որը գրաւականն է մեր բոլոր յաղթանակների»:

Հայր Մեսրոպը, խօսելով նաեւ Զրիստոսի չարչարանքների, խաչելութեան եւ յաղթական յարութեան մասին, ընդգծեց, որ նոյնիսկ յուսաբեկութեան ամենածանր օրերին, ինչպէս մեր Տիրոջ Յարութեան աւետիսից առաջ առաքելներն ու Նրա հետեւորդներն էին, պէտք է յաղթանակի լոյսը առաջնաշարժիչ ուժ լինի եւ խոստումնալից ապագայի կերտումը՝ նպատակակետ մեզ համար:

Հայր Սուրբը յաւելեց, որ այս օրերին, նաեւ սրտաբուխ աղօթքով յիշատակում ենք բոլոր նրանց, որոնք հաւատով եւ



յաղթանակի զգացումով դարերի հոլովոյթում նահատակուեցին յանուն ազատ կեանքի, յանուն իրենց քրիստոնէական հաւատի եւ սրբազան հայրենիքի: Ապա աղօթք վերառաքելով առ Աստուած՝ Հոգեշնորհ Հայր Սուրբը հայցեց Տիրոջից, որ Երկնքի Արքայութեան լոյսերի մէջ բնակեցնի մեր բոլոր նահատակների հոգիները:

Վերջում Հայր Սուրբը մաղթեց, որ Ամենակարողն Աստուած պահի ու պահպանի մեր նուիրական հայրենիքը եւ իմաստութիւն ու խորագիտութիւն պարգեւի ամենքին, որպէսզի կարողանանք ազգովին համախումբ կերտել մեր յաղթական գալիքը՝ ի փառս Ամենասուրբ Երրորդութեան, ի պայծառութիւն մեր հայրենիքի եւ մեր Առաքելական Մայր Եկեղեցու: Սուրբ Պատարագի աւարտին, նախագահութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայեանի, կատարուեց հոգեհանգստեան արարողութիւն՝ Հայրենական մեծ պատերազմի եւ Արցախեան հերոսամարտի ընթացքում զոհուած քաջորդիների հոգիների հանգստութեան եւ խաղաղութեան համար:

Նոյն օրը Մայր Աթոռի Սուրբ Էջմիածնի միաբաններն այցելեցին «Յաղթանակ» զբօսայգի, որտեղ Անյայտ զինուորի յուշարձանին ծաղկեպսակներ գետեղելուց յետոյ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Հայրենական մեծ պատերազմում եւ Արցախեան հերոսամարտում զոհուածների անմար յիշատակին:



Պատմութեան Մէջ Այսօր

Աւետիս Ալեքսանեան

Աւետիս Ալեքսանեան (10 Մայիս 1910, Կ.Պոլիս – 20 Սեպտեմբեր 1984):

Մաս կը կազմէ Պոլսոյ 1925-1950 թուականներուն գրական-հրապարակագրային կեանքին մէջ հասունցած գրողներու դասուն, անոնց՝ որոնք Հայու իրենց ապրումներով ու երազներով, գրի եւ գրականութեան ազնիւ կիրքով, բայց մանաւանդ ընկերային եւ գաղափարական հակումներով չէին կրնար լայն թրջերով շնչել թրքական միջավայրի մէջ՝ որովհետեւ ամէն օր կը զգային թէ կասկածոտ աչք մը կը սեւեռի իրենց վրայ, լրտեսող շուքեր կը դեգերին իրենց շուրջ, ոստիկանութեան քաղաքականութեան մասնաւոր հետաքրքրութիւն մը կը հալածէ զիրենք...

Անոնք որ ապրած են այդ օրերու Պոլիսը, ասկէ աւելին լսելու պէտք չունին, ըմբռնելու համար թէ գիրքի, թերթի, հանրային եւ ազգային ապրումներու տրամադիր մարդը ինչ երկրպագմբ մը կրնայ անցնիլ խմբագրական սեղաններու առջեւ կամ յանձնուիլ մտքի լարումներու: Աւետիս Ալեքսանեան մէկն է եղած անոնցմէ, որոնք աւելի քան քսանհինգ տարի... խեղդակապով մը ապրած են՝ գրաշարական սեղաններ մինչեւ շաբաթաթերթերու խմբագրութիւնը եւ հրապարակագրային-գրական իրենց աշխատանքը մտաւոր ու հոգեկան բաւարար-

րութեան մը, ասպաւենի՝ մը վերածելուման համար: Չինք ճանչցած ենք պատանութեան մեր օրերուն, երբ ինք երիտասարդ էր արդէն եւ կը խմբագրէր «Պատկեր» շաբաթաթերթը «1932-1940-: «Սեւ աշխատանք» ընդունակ, դժուարութիւններու առջեւ աննուաճ, նպատակ մը իրագործելու իր կամքին մէջ վճռական՝ յանձնառու մարդ մը, մեծ յատկութիւններէ զերծ՝ սակայն իր համեստութեան մէջ առաւել սիրելի, աշխատունակ, գուրգուրոտ՝ նորածիլ արժէքներու եւ երեց թէ կրտսեր գրչի մարդոց: Գրական նախափորձերը ընելէ ետք 1926-1927 տարիներուն, պոլսահայ մամուլի մէջ, յաջորդաբար ձեռնարկած է շաբաթաթերթերու, կիսամսեայ եւ պարբերական հանդէսներու հրատարակութեան, «Կիրառ» (1928), «Ամսուն գիրքը» (1930), «Պատկեր» ամսագիր (1930), ապա համանուն շաբաթաթերթը (1932-1940), «Նոր Օր» եւ «Այսօր» (1947-1948): Միայն նիւթական անձկութիւնը չէ եղած պատճառը անուններու այս յաջորդականութեան եւ բազմազանութեան, Պոլսոյ մէջ թերթերու կեանքը կախում ունի մանաւանդ խափանումի եւ արգելքի մշտական վտանգէն, հետեւանք՝ ոստիկանութեան քաղաքական ճիւղերու կասկածանքին կամ դիւրին վերագրումներու...

Կը թուի որ 1950-ական թուականներուն Ալեքսանեանի համար անկարելի դարձած է շնչել գոյութիւն ունեցող մթնոլորտին մէջ ու հարկադրաբար անցած է Փարիզ:

ՈՒՂԵՐԶ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ուղերձը... Սկիզբը Էջ 01

Մայիսի 9-ը՝ իբրեւ յաղթանակի եւ խաղաղութեան տօն, մեզ համար միշտ լինելու է ոգեշնչման աղբիւր եւ վկայութիւն, որ մեր յաղթանակներն ու ձեռքբերումները հնարաւոր է կերտել համազգային միասնականութեան անպարտ ուժով: Մենք պարտք ունենք մեր նահատակների ու նոր սերնդի առջեւ՝ ի գին ամէն զոհողութեան շենացնելու հայրենի մեր երկիրը եւ վերանորոգելու մեր կեանքի խաթարուած ընթացքը, ջանքեր ներդնելու յանուն արցախահայութեան խնդիրների յաղթահարման եւ հետեւողականօրէն պայքարելու յանուն ազգային մեր իղձերի ու նպատակների իրականացման:

Աղօթում ենք նահատակուած հայորդիների հոգիների հանգստութեան, գերիների ու անյայտ կորածների վերադարձի, վիրաւորների ապաքինման համար: Հայցում ենք, որ Բարձրեալ Տէրը իր օրհնութեան ներքոյ խաղաղութեան ու ապահովութեան մէջ պահպանի մեր Հայրենիքը եւ զօրացնի մեր ժողովրդին ոգու արիւթեամբ, յոյսով ու հաւատով, այսօր եւ միշտ. ամէն:

Օրհնութեամբ՝
ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«Զարթոնք» Հայրենիքի Մեջ – 62 –

Մենք Չենք Ընդունում Այդ Բաժանարար Գիծը՝ Հներ Եւ Նորեր. Մեզ Համար Բաժանարար Գիծ Է Ապագայինը, Դավաճանությունը.

Արա Չոհրապետան

ՔՐԻՍԹԻՆԱ ԱՂԱԼԱՐԵԱՆ

«Զարթոնք»ի Երեւանի Աշխատակից



Օրեր առաջ տեղի ունեցավ «Զարթոնք» ազգային-քրիստոնեական կուսակցության հիմնադրումը, որն իր շուրջն է համախմբել ինչպես Հայաստանի այնպես էլ Սփիւռքի գործիչներին: Կուսակցության կարգախոսն է՝ «Արթնացի՛ր, արթնացրո՛ւ»: Կուսակցության նախագահը՝ Արա Չոհրապետանը: Նպատակը փրկել երկիրը կործանումից ու դրա ճանապարհով տանող իշխանությունից: «Զարթոնք» օրաթերթը կուսակցության ստեղծման, նպատակների, անելիքների, քաղաքական դաշտում դերակատարման, հասարակությանը խորը քննիք արթնացնելու ուղիների եւ այլ հարցերի շուրջ զրուցեց նախագահ Արա Չոհրապետանի հետ:

Պարոն Չոհրապետան, նախ կը խնդրեմ խօսել Չարթոնք ազգային-քրիստոնեական կուսակցության ստեղծման մասին: Ինչպե՞ս այն ստեղծուեց, ո՞րն է առաքելությունը, նպատակները եւ անելիքները:



- Շնորհակալ եմ հարցի համար: Չարթոնք Ազգային-Քրիստոնեական կուսակցությունը ստեղծուեց հաշուի առնելով երկրում տեղի ունեցած վերջին զարգացումները: Ինչպես բոլորս գիտենք, պատերազմը մեծ հետք թողեց մեր ժողովրդի վրայ: Մենք հասկացանք, որ միայն քաղաքական լծակների միջոցով կարելի է ծրագրեր իրականացնել: Նախկինում ես եւ

իմ գաղափարակիցները մտածում էինք, որ կարող ենք հասարակական գործունեությամբ հասնել ազգային արժեքների պահպանությանը ու դրա համար չարժեք քաղաքական լծակներ ունենալ: Բայց պատերազմը ցույց տուեց, որ ցանկացած լավ գաղափար կարող է քանդուկի վրա կանգնել իշխանությունը բանեցնողի կողմից: Սա էր պատճառը, որ որոշեցինք ազգապահպան այդ առաքելությունը վերցնել մեզ վրայ:

Իհարկե, առաջին հայեացքից Չարթոնքի առաքելությունը բաւական լաւն է երեւում, սակայն ինչքանո՞վ էք հնարաւոր համարում այդ բարձր գաղափարների իրականացումը այսօրուայ Հայաստանում: Եւ վերջապէս, Հայաստանում հարիւրաւոր կուսակցութիւններ են ստեղծուում: Ինչո՞վ է տարբերուելու Ձեր կուսակցութիւնը: Ինչպե՞ս էք մարդկանց համոզելու, որ այդ առաքելութիւնը հենց դուք էք կարողանալու կատարել ձեր համակիրների ու կուսակցական ընկերների հետ:

- Շատ կարեւոր հարց էք բարձրացնում, որովհետեւ մեր ժողովուրդն այսօր վստահութեան լուրջ պակաս ունի: Տարակերպ շարժումները, կուսակցություններն ու ճարպիկ ձեռնվարկությամբ կառավարող դաշտը

բոլորի համար խնդիր է դարձել: Առողջ բանականություն ունեցող մարդն էլ չի կարողանում կողմնորոշուել, ուր մնաց այն մարդիկ, ովքեր ընդհանրապէս հետաքրքրութեամբ չունեն քաղաքական գործընթացների նկատմամբ: Պատահական չէ նաեւ մեր կողմից ընտրուած անունումը: Եթէ մեր ժողովուրդն արթուն լինէր, չէր կարող հանդուրժել այնպիսի անձի կամ անձանց խմբերի, որը կարող էր ժողովրդին տանել դէպի կործանում կամ պարտություն: Մենք կարծում ենք, որ դա մեր ազգի՝ հոգեւոր արժեքներից հեռանալու հետ է նաեւ կապուած: Մենք խնդիր ենք դրել արթնացնել մեր ազգին: Ի՞նչ ենք պատկերացնում արթնացնել ասելով: Մենք փորձելու ենք իրազեկել, վտանգների մասին խօսել ու վտանգների չեզոքացման հետ կապուած մեր ծրագիրը մատուցել: Ինչքանով կը յաջողուի մեր հասարակութեան վստահութիւնը վաստակել, հիմա չեմ կարող ասել: Բայց բոլոր դէպքերում մեր կուսակցութեան շարքերում կան այնպիսի մարդիկ, որոնք ոչ միայն նոր են որոշել ի յայտ գալ, ազգապահպան գործունեութիւն ծաւալել, այլեւ՝ մարդիկ են, ովքեր տարիներ շարունակ իրենց դրսեւորել են ազգային արժեքների պաշտպանութեան հարցում, եղել են առաջամարտիկ: Այդ մարդկանց գործունեութիւնն այս առումով ազնիւ է: Որքանով կը յաջողուի ճարպիկ ձեռնվարկութեան ու խարդաւանքի (manipulation) ենթարկուած ժողովրդի մէջ այդ ձայնը լսելի դարձնել, ժամանակը ցոյց կու տայ:

Կարծում եմ՝ շատ լաւ տեղեակ էք, որ հասարակութեան շրջանում հնի եւ նորի պայքարը ու խարդաւանքը շատ խորն է: Մարդիկ բոլորին բաժանում են հների եւ նորերի: Ինչպե՞ս էք կարողանալու մարդկանց արթնացնել ու ցոյց տալ, որ այստեղ հների ու նորերի պայքար չէ, այլ, վերջիվերջոյ, երկիր փրկելու պայքար է:

- Նախ, մենք չենք ընդունում այդ բաժանարար գիծը՝ հներ եւ նորեր: Աւելին, մենք եթէ ազգային արժեքներից ենք խօսում, մենք ամենահին ենք պաշտպանում՝ Հակ Նահապետին: Պահպանողական տեսակետից մենք չենք կարող մեր արմատները մոռանալ: Մենք պետք է խօսենք երեւոյթների բաժանման մասին: Մեզ համար բաժանարար գիծ է ապագայինը, դաւաճանութիւնը: Մենք մերժում ենք այդ երեւոյթները: Մեր կարմիր գծերը դրանք են ու այդ ապագային ծրագրերը սպասարկող անձերը: Իսկ մնացած առումով, մենք կարծում ենք, որ պետք է համախմբել ազգին: Հակառակ դէպքում մեր ոխերիմ հարեւանները բնականաբար օր առաջ ուզում են մեզ քարտեզից ջնջել ու անգամ չեն էլ թաքցնում այդ ծրագրերը: Այս պայմաններում գործող իշխանութեան խաղաղասիրութեան քարոզները մեզ տանում են կործանման ճանապարհով, այն էլ՝ երաժշտութեամբ:

Մեզի հետաքրքիր է նաեւ Ձեր կարծիքը Հայաստանի ներքաղաքական դաշտի մասին: Ընդդիմութիւն, իշխանութիւն, ինչ խնդիրներ էք տեսնում քաղաքական պայքարի հարցում: Վերջին օրերին բոլորն քննադատութեան թեմա է դարձել ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի առաջարկը ուղղուած ՀՀ երկու նախագահներին՝ ընտրութիւններին միասին գնալու վերաբերեալ, լաւ հասկանալով, որ նրանք ունեն խնդիրներ, չհամընկնող շահեր: Ի՞նչ էք մտածում այդ մասին:

- Չեմ կարող առաջին նախագահի ազնւութեան մասին կարծիք յայտնել, քանի որ քաղաքական դաշտը շատ է խառնուել իրար: Եթէ այդպիսի ազնիւ մղում կայ այդ առաջարկն անելիս, այլ ոչ թէ հերթական անգամ դաշտը խառնելու հնարք է, ապա հետաքրքիր առաջարկ է: Բայց ես ուզում եմ յիշեցնել առաջին նախագահի 2015 թուականի մարտի մէկի ելոյթի այն հատուածը, երբ ներկայացնում էր ընդդիմութեան ծածկագրուած ծրագիրը: Կարծես թէ, այդպէս էլ եղաւ: Ըստ իր խօսքի բովանդակութեան՝ հարիւրամեակն առանց ռեժիմի կարգախօսն իրականացուեց: Կարծեմ, Լեւոն Տէր-Պետրոսեանը դա անուանում էր Պեռլինի գրաւումից աւելի հնարամիտ ու լաւ ծրագիր: Փաստօրէն, 2018 թուականի մայիսի 28-ին դա նշեց Նիկոլ Փաշինեանը ու այդպէս էլ եղաւ: Լեւոն Տէր-Պետրոսեանը Նիկոլ Փաշինեանին ու իր օգնական ուժերին անուանում էր Բաբելոնեան աշտարակի շինարարներ: Չուտ աւանդական տեսակետից պետք է յիշեցնեմ, որ Հայկ Նահապետը եղել է Բաբելոնեան աշտարակի շինարարի՝ Բելի կամ Նեբրոֆթի հակառակ կողմը:

Շար. Էջ 06

Եղեռնի Հետքերով - 3

Տեղաբնիկ Պենոն Վասիլեանի Յուշերը Չոր Մերճուման-Չորք Մարգարան

Շար. Նախորդ շաբաթին

ՏԵՕՐԹ ԵՈՒԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ապրուստ եւ ժամանց.-

Տեղաբնիկներուն ամենէն աղքատ ընտանիքը առնուազն տասը նարինջի ծառ ունէր: Իւրաքանչիւր ծառի նարինջները մէկ ոսկեղորամ կը շահէին, տասը ծառէն՝ տասը ոսկեղորամ: Այդ տասը ոսկեղորամը ընտանիքին ամբողջ տարուան ծախսը կ'ապահովէր: Գործաւորութիւն չէին ընէր, ամէն ինչ աժան էր, ուտելիքը եւ հագուելիքը աժան էին, մէկ *օքա* հացին գինը երկու մեթելիք էր, 400 հարկը մեթելիքը մէկ ոսկեղորամ էր, մէկ *օքա* միսին գինն ալ շատ աժան էր:

Տեղաբնիկները իրենց ժամանակը սրճարաններուն մէջ կ'անցընէին: Շատեր շատ ծառէր ունէին՝ հարուստ էին: Արհեստ ունեցողներ շատ էին. կօշկակար, երկաթագործ, սափրիչ, մսավաճառ, կահագործ, փայտահատ, դերձակ, որմնադիր, փռապան, խորոված եփող, նպարավաճառ, ուսուցիչ, վաճառականներ կերպաս-սաւան, ճերմակեղէն կը ծախէին, երիտասարդ աղջիկներ ձեռագործ կ'աշխատէին, նարինջի եղանակին նարինջի խանութներուն մէջ կ'աշխատէին, տղամարդիկ նարինջ կը հաւաքէին, միջոց ունեցողներ՝ նարինջը պարտեզէն ուղղակի խանութներ կը կրէին, գոյգ մը եզներ ունեցողը պարտեզը կը հերկէր... այսպէս կ'ապրէին: Իջեւաններ կային՝ գիւղացիներ կենդանիներով կու գային իջեւանի մէջ կ'ապրէին: Տեղաբնիկ մէջ թատրոն չկար:

Տեղաբնիկ մէջ եթէ կին կամ աղջիկ մը ճամփէն շեղէր՝ գայն կ'ոչնչացնէին: Դպրոցական երախաներ իրենց ազատ ժամերը խաղերով կ'անցընէին՝ գնդիկ, պահուլտուք, հոլ եւ տարբեր խաղեր. մեծ տղաք վեգ կը խաղային: Ուրիշ խաղ մը եւս՝ ամէն Կիրակի օրերը վերի եւ վարի թաղի մեծ տղաք բարձր լեռան կողմը կ'ելլէին, իրարու պարսատիկով քարի կռիւ կ'ընէին, ո՛ր կողմը աւելի շատ քարով զարնուած ըլլար՝ այդ կողմը պարտուած կը սեպուէր: Յաղթական կողմի տղաքը երգելով-պարելով կ'երթային իրենց թաղը:

Տեղաբնիկներու կերակուրները.-

Ուտելիքի առաջնութիւնը չիքեօֆթէն էր: Չիքեօֆթէն կը շաղուէր, քովը կըղմա միս, կանանչ սոխ եւ թան, բայց անպայման օդին պակաս չէր ըլլար: Չիքեօֆթէն կը շաղէն

Կանանչ սոխ կը կեղուեն

Չիքեօֆթէն գլխուս թագը

Շուտ շաղէ Մայրամ պաճը

Թանն է անոր դարմանը

Այսպէս չիքեօֆթէն երգը կ'երգէին.

Տեղաբնիկներու ճաշատեսակներուն շարքին էին սմբուկի լիցքը, սմբուկի մուսաքան, ձաւարով փիլաւը, բրինձի փիլաւը, ապուրը, սիսեռով խառն կերակուրները, գետնախնձորով կերակուրները, շիշ պէօրէկը, միսով պէօրէկը, տրոմաճով՝ ապուրը, կանանչ լուպիան, տերեւով փաթոյթը, թարխանայով ապուրը, ոսպաապուրը...:

Նոր Տարի, Ս. Ծնունդ եւ Չատիկ.-

Լաւ մաղթանքներով կը ձեռնուին ու կը համբուրուին, առատ կերակուրներ կը պատրաստեն-կ'ուտեն-կը խմեն-կ'երգեն-կը պարեն, հրացաններ կը զարնեն, շատեր կը հարբեն... այսպէս քէֆ կ'ընեն: Երախաներուն դրամ կու տան, Նոր հագուստներ կը հագցնեն, երախաները շատ կ'ուրախանան... սրճարաններուն մէջ մանր դրամներով քարտ կը խաղան, պարտուող եւ շահողներ միասին կը խմեն մինչեւ ուշ գիշեր կը հարբեն, կ'երգեն, կը զուարճանան, առաւօտեան ժամերուն տուն կ'երթան:

Յունուարի վեցին Ս. Ծնունդի օրը իւրով-շաքարով *չէօրէք* կը շինեն եւ տարբեր անուշեղէններ կը պատրաստեն, եկեղեցի կ'երթան, ափսէին մէջ դրամ կը դնեն եւ երեք օր կը տօնեն, իրարու այցելութիւն կ'ընեն, կ'ուտեն-կը խմեն-կը զուարճանան, խանութները երեք օր փակ կը պահեն:

Մեծ տօնին՝ Ս. Չատիկին, իւրաքանչիւր տուն յիսուն, հարիւր հաւկիթ կը ներկէ, երախաները հաւկիթի կռիւ կ'ընեն, աղուոր կը հագնին, ազգականներու կ'երթան, պզտիկները մեծերու ձեռքերը կը համբուրեն, մեծերը պզտիկներուն կը համբուրեն եւ դրամ կու տան...

Առողջապահական խնդիրներ.-

Տեղաբնիկ մէջ բժիշկ չկար: Օրին մէկը բժիշկ մը կու գայ Տեղաբնիկ, երեք-չորս ամիս կը մնայ, կը նայի՝ անգործ եւ անօթի պիտի մնայ, ետ փախեր է, ըսելով՝ «այնքան ատեն որ Տեղաբնիկ մէջ այսքան նարինջ կայ՝ բժիշկը անօթի կը մնայ»: Տեղաբնիկ կիներ աչքի ցաւի համար դեղեր կը պատրաստէին, կոտրուածքը եւ Յօդի խախտուածքը շատ լաւ կը բուժէին: Երբ կին մը ծննդաբերութեան ցաւ ունենար՝ շուտով մանկաբարձներ կու գային, իրենց հետ ուրիշ երկու մեծ կիներ կ'ըլլային... այսպէս իրարմէ կը սորվէին: Երեխան երբ ծնէր՝ կը լուային եւ վերջը աղով կը փաթթէին, երեք օր ետք բաթօցեայ կը հանէին: Մանկաբարձը մեծ ասեղ մը կ'այրէր կը կարմրցներ եւ երեխային կռնակը, փորը կ'այրէր, յետոյ երախային տակը աւազ դնելով կը փաթթէին ու կը պառկեցնէին: Երախային մայրը եօթերորդ օրը կ'ելլէր իր գործին կը նայէր:



Տէր եւ տիկին Պենոն Վասիլեաններ, Երեւան, իրենց տան պարտեզը

Կնուկ.-

Ատկէ ետք երեխան կը կնքէին. դուռ-դրացի կը հաւաքուին, երեխան եկեղեցի կը տանին, կնքահօր գիրկը կու տան, տերհայրը երեխան կը կնքէ, ետ կնքահօր գիրկը կու տայ, մանկաբարձը երեխան կ'առնէ մօր գիրկը կու տայ եւ կնքահայրը տերհօր ու մանկաբարձին դրամ կու տայ: Եկեղեցիէն ելլին մարդիկ դրամ կը դնեն եկեղեցիին ափսէին ու կ'երթան տուն, կնուկը կը շնորհաւորեն, կ'ուտեն-կը խմեն, կ'երթան իրենց տունները:

Ամուսնութիւն.-

Տեղաբնիկն ինչպէ՛ս կ'ամուսնացնէ իր տղայ զաւակը: Հայր եւ մայրը աղջիկ մը յարմար տեսնելով կը հաւանին, իրենց մօտիկ ազգականներով միասին կ'երթան աղջկան տուն, աղջկան ձեռքը կ'ուզեն աղջկան հօրմէն: Տղան Նոյնիսկ աղջկան տեսած չ'ըլլար, կամ աղջիկը տղան տեսած չ'ըլլար եւ չի ճանչնար: Եթէ աղջկան կողմը յարմար տեսնէ՝ խօսք կու տայ, օր կ'որոշեն եւ այդ օրը տղուն կողմը կ'երթայ աղջկան Նշան կը դնէ: Աղջիկը կու գայ խնամիկներուն ձեռքերը կը համբուրէ, իրար կը շնորհաւորեն... բայց աղջիկը ու տղան իրար չեն տեսներ:

Ամուսնութենէն ութը օր առաջ պսակի քարտերը կը բաժնեն, Շաբաթ օր կը հաւաքուին տաւուկ-գումնայով, երգ-պար կը բռնեն, տերհայրը Նշան կը կարդայ, Նշանին մասնակիցները մէկական մեծիտիէ կու տան, տղուն կողմը դրամ տուողներուն անունները կ'արձանագրէ, հաւաքուած դրամով աղջկան ոսկեղէն կ'առնեն: Այդ օր մինչեւ ուշ գիշեր կ'ուտեն, կը խմեն, կ'երգեն, կը պարեն, օդին շատ կը խմեն, ութ-տասը կիներ ու աղջիկներ, միքանի երիկ մարդիկ աղջկան տունը կ'երթան տաւուկ-գումնայով, աղջկան ձեռքը *ղնա* կը քսեն (ասոր կ'ըսեն ղնայի գիշեր), մէկ-երկու ժամ քէֆ կ'ընեն, ետ տուն կը դառնան: Մինչեւ առաւօտ հարսանիք կ'ըլլայ:

Կիրակի առաւօտ ժամը տասնէն ետք ժողովուրդը կը հաւաքուի, քէֆը կը շարունակուի մինչեւ ժամը երեք-չորս: Վերջը, ձիերով կ'երթան աղջկան տուն, ձիերով կը պարեն, մէկ-երկու ժամ ժամանակ անցընելէ յետոյ, կ'ուզեն աղջկան դուռն բերել: Աղջկան եղբայրը դուռը գոց կը պահէ որ Նուէր տան, կու տաս-չես տար քիչ մը կատակներ կ'ընեն, վերջը կնքահայրը տղուն մի քիչ դրամ կու տայ:

Աղջիկը ձիուն վրայ կը նստեցնեն, մարդ մը ձիուն գլուխը կը քաշէ, երկու ուրիշ մարդիկ - ամէն մէկը մէկ կողմէն - ձիուն թամբին կենալով, տաւուկ-գումնայով, երգելով-պարելով ճամփայ կ'ելլեն դէպի եկեղեցի: Տղան եկեղեցիի դռան առաջ անհամբեր սպասելով իր հարսին՝ մոլորուած կ'ըլլայ:

1 Խմբիկ պատրաստուած տափակ կամ կլոր փողով, որ կ'օգտագործուի պահքի ճաշերու համար:

Եղեռնի Հետքերով - 3

Տեօրթեուցի Պենոն Վասիլեանի Յուշերը...

Սկիզբը Էջ 04

Հարս ու փեսան եկեղեցի մուտք կը գործեն, տերհայրը կը պսակէ կը վերջանայ, կնքահայրը տերհօր դրամ կու տայ, ներկայ մարդիկ եկեղեցիին դրամափսէին դրամ կը դնեն:

...Հարսը ձի կը նստեցնեն, երգով-պարով տուն կը տանին, նարինջի ծառ նուէր կու տան: Այդ ծառը հարսին կ'ըլլայ, մինչեւ ուշ գիշեր հարսնիք կ'ընեն, հարսներուները կ'երթան, հարսը տղուն կու տան, պայթուցիկներ կը պայթին, զէնքեր կը զարնեն, հարսնիքը վերջ կը գտնէ...:

Թաղում.-

Մեռելը տաք ջուրով եւ օճարով լաւ մը կը կը լուային, ճերմակ սաւանով կը փաթէին-կը թաղէին: Տուն վերադառնալով՝ «գլուխնիդ ողջ» կ'ըսէին: Մեռնողի տունը եօթը օր կերակուր չէր եփուէր, ազգականներ ու դրացիներ կը բերէին կերակուր: Եօթերորդ օրը տանտէրը թէթել կերակուր մը կ'ըներ, գերեզմանատուն կ'երթային, կը վերադառնային հոգեճաշ կ'ուտէին, սուրճ կը հրամցնէին:

Զառասույնքին գառնուկ կամ ոչխար մը կը մորթէին, միքանի տեսակ կերակուրներ կը պատրաստէին, հոգեճաշը կ'ուտէին՝ ամեն մարդ իր տունը կ'երթար:

Այս ձեւով մեռել թաղելը թուրքերէն սովորութիւն մնացած էր տեօրթեուցիներուն:

Ս. Խաչին ամբողջ ժողովուրդը գերեզմանատուն կ'երթար, հարուստներ՝ ոչխարներ, աղքատ դասակարգը՝ հաւ, աքլոր կը մորթէին, տեղւոյն վրայ քովը ձաւարով եւ բրինձով փիլաւ կ'եփէին, երկար սեղաններու վրայ բոլորը միասին կը նստին-կ'ուտեն, ինչ որ մնայ՝ տուն կը տանին, աղքատներուն կը բաժնեն:

Հին պատմութիւն մը.-

Տեօրթ Եոյ հին պատմութիւններ ալ կը պատմէին: Նշանաւոր էր Արթին Զեհէին եւ Փանոս աղային պատմութիւնը.- Արթին Զեհէն 1800ի աւերները Չոք Մերձումանի կառավարիչ կը նշանակուի: Այդ տարին թուրք հարիւրապետ մը տասնհինգ-քսան զինուորներով Արթին Զեհէին հիւրը կ'ըլլայ: Արթին Զեհէն իր հիւրին ի պատիւ ոչխարներ կը մորթէ, կերակուրներ կը պատրաստուին, կ'ուտեն-կը խմեն, կը գրուցեն.. իրիկուն՝ պառկելու ժամը կու գայ: Հարիւրապետը կը հարբի, Արթին Զեհէին կ'ըսէ. «Արթին աղա պէն քիմ իլէ եաթաճայլը»: Արթին Զեհէն առանց տատամսելու եւ շփոթելու կ'ըսէ. «հիմա մէկը կը գտնենք»: Արթին աղան խելացի մարդ է եղեր. կը մտածէ՝ ի՞նչ ընէ: Փանոս աղա անունով հակառակորդ մը ունի եղեր, որուն հետ դաշտավայրի մը պատճառով մնայուն թշնամանք եւ հակառակութիւն յառաջացած է եղեր: Փանոս աղան *չիֆթէի պաշի* է եղեր, շատ հարուստ:

Արթին աղան անմիջապէս, կէս գիշերին Փանոս աղային տունը կ'երթայ դուռը կը դակէ: Փանոս աղան ներսէս ձայն կու տայ՝ ո՞վ է:

- Փանոս աղա, ես եմ, Արթին աղան: Բաց դուռը, այս գիշեր մենք եղբայրներ ենք: Վաղը՝ նորէն հակառակորդ: Զեզի ըսելիք ունիմ:

Փանոս աղան դուռը կը բանայ, «ի՛նչ կ'ուզես, ըսէ նայիմ»:

- Փանոս աղա, մեր հարիւրապետ հիւրը, ինծմէ հետը պառկելու համար կնիկ կ'ուզէ: Ի՛նչ ընենք:

- Դուն գնա՛ իրեն սպասուոր, ես քիչ ետք իրեն լաւ կնիկ մը կը բերեմ:

Արթին աղան տուն կ'երթայ կ'ըսէ. «մէկ հատ գտանք, հիմա կու գայ»:

Փանոս աղան դուռս կու գայ տունէն, կ'արթնցնէ իր բոլոր գործաւորները, ամենքը գաւազաններով, բահերով, բրիչներով կը յարձակին հարիւրապետին, ըսելով՝ «առ քեզի կնիկ»: Հարիւրապետը վիրաւոր վիճակի մէջ հագիւ կը փախչի իր զինուորներուն հետ դէպի *չայլը*...:

Արթին եւ Փանոս աղաները կը նստին, կը խորհրդակցին թէ ի՛նչ պիտի ընեն, գիտնալով թէ գէշ հետեւանք պիտի ունենայ եղածը:

Արթին աղան կ'ըսէ. «այս շուն հարիւրապետը վաղը *փատիշահի*ն բողբջագիր կը գրէ ըսելով՝ *կեաւուր*ները մեր վրայ յարձակեցան, սուտ ամբաստանութիւն կ'ընէ: Սուլթանը մեզի անպայման կը պատժէ»:

Աղաները կ'որոշեն անմիջապէս առտու կանուխ Ստանպուլ երթալ, *փատիշահի*ն քով: Ձիեր կը նստին, կ'երթան Ստանպուլ: *Փատիշահի*ը գիրենք կ'ընդունին:

Աղաները պատահածը նոյնութեամբ կը պատմեն *փատիշահի*ին: Այս միջոցին, հարիւրապետին նամակը կը հասնի *փատիշահի*ին: *Փատիշահի*ը հարիւրապետին նամակը կը կարդայ, Արթին Զեհէին դառնալով կ'ըսէ.

«Արթին աղա, դուն շատ խելացի մարդ ես: Եթէ հարիւրապետին նամակը ձեզմէ առաջ հասած ըլլար դուք շատ մեծ պատիժներու պիտի ենթարկուէիք: Այրիք, լաւ ըրեր էք, որովհետեւ դուք իրաւունքով գործեր էք»: Արթին Զեհէին սուրով մը կը պարգեւատրէ, իսկ Փանոս աղային՝ ուրիշ նուէրով եւ ճամփու կը դնէ, իսկ հարիւրապետը պաշտօնագուրկ կ'ընէ:

Այս երկու աղաները կը վերադառնան Տեօրթ Եոյ ուրախ ու հանգիստ: Այդ օրերուն այդպիսի սուր ունեցողներու ամբողջ զինուորականներ եւ ժողովուրդ բարեւի կը կենան եղեր: Եւ այսպէս Արթին աղան անելի ու անելի յարգանքի կ'արժանանայ...:

Աղաները այսպիսով կը համբուրուին կ'ողջագուրուին ու անկէ ետք հաշտ կ'ապրին:

Այդ սուրը մինչեւ իմ օրերս՝ 1914ը, Արթին աղային Մկրտիչ անուն թոռնիկին տունը կախուած էր: 1914ին երբ թուրք զինուորներ տուներ խուժեցին, մարդիկ ձերբակալեցին այդ սուրը առին տարին:

ԽՈՉԻ ՈՐՍԸ

Օրին մէկը գիւղէն երեք երիտասարդ տղաք եկան, հօրս ըսին՝

- Լեւոն աղա, մենք խոշոր խոզ մը որսացինք, տղաքդ դրկէ ալ խորոված ընեն ուտեն:

Մենք՝ եղբայրս ու ես, հաճընցիներէն Գեորգը, Սարգիսը, Վահանը եւ Վարդանը թուրքերուն հետ գացինք, մեզ հետ առնելով աղ-պղպեղ, հաց, երկու մեծ տոպրակներ:

Թուրքերը մեզ տարին մեծ ջուրին եզերքը: Որսը ծածկած էին ծառերու ճիւղերով, բացին ցոյց տուին, իրենք հեռացան բաւական բարձր տեղ մը, նստան մեզ դիտեցին: Մեծ տղաքը խոզը մորթեցին, կաշին քերթեցին, սկսան միսը կտոր-կտոր ընել: Մենք ալ՝ փոքրերս, կեռասի ծառերու ճիւղեր կտրեցինք, մաքրեցինք, ճիւղերու վրայ սկսան շարել միսը: Խոշոր կրակ մը վառեցինք, սկսանք միսը խորովել: Միսին հոտը սկսաւ անուշ-անուշ բարձրանալ: Այս երեք թուրքերը հեռացան-գացին. մենք նստանք փառաւոր մը կերանք-կշտացանք, մնացած մէկ մասը եղբայրս տոպրակի մէջ լեցուց ու հոն խոզի մորթին մէջ պահեց, մէկ կողմ դրաւ, ըսաւ՝ «մենք երթալէ ետք կու գան կ'ուտեն թուրքերը... իբր թէ մէկը չիմանայ...»:

Մենք տուն վերադարձանք, տոպրակով միսերը մօրս տուինք: Մայրս միսը տապկեց «ղաւուրմա» պահեց:

Երեկոյեան, մէյ մըն ալ տեսնենք մեր տեօրթեուցի Օսման Էֆենտին, մեզի եկաւ: Ասկա մեզի Տեօրթ Եոյէն ծանօթ էր, ամեն տարի մեր գիւղը կու գար օդաբոխութեան, յաճախ ալ՝ մեր տունը կու գար, կ'ուտէր-կը խմէր-կ'երթար, գիւղացիներուն ալ կը խաբէր թէ ինք պաք կը բռնէ: Գիւղացիները այդպէս համոզուած էին, բայց որ գիտնային թէ սուտ է՝ զինք գիւղէն դուրս կը վռնէին՝ «*կեաւուր*» ըսելով: Այս սուտ պաք բռնող Օսման Էֆենտին եկաւ: Նստանք գրուցեցինք, ընթրիքի ժամը եկաւ, մայրս ինչ որ կայ բերաւ՝ հաւկիթ, մածուն, պանիր, քամած մածուն, թէ: Աս Օսմանը մօրս ըսաւ. «Անիք մօքքուր ասկէ բեր ալ քիչ մը ուտեն»:

Մայրս բերաւ «*ղաւուրմա*», խոզի միսը: Օսմանը լաւ մը կերաւ-կշտացաւ, «այիւստիւլլէի» ըսաւ,- ու անցուց.- այս միւսիւմանները իրենց բերնին համը չեն գիտեր»: Մայրս ըսաւ՝ «Օսման Էֆենտի կ'երեւի մայրդ քեզի հայէ առած է»: Կրնայ ըլլալ, Անիք մօքքուր: Մեղքը իր վզին...- պատասխանեց Օսմանը:

ԳԻՐԴԻՆ ԱՂԶԻԿԵՐԸ ԵՒ ՖԱԹՄԱՆ

1912ին գիւղի ճահիլ աղջիկներ - տասնէն-տասնչորս տարեկաններ - հայ եւ թուրք միասնաբար հարս ու փեսայի խաղեր կ'ընէին, լաթերով հարս ու պեպէք կը շինէին, հարսին գուլիսին լաչակ կը կապէին, ծաղիկներ կը շարէին, «լը-լը-լը» եւ ուրիշ երգեր կ'երգէին:

Մեր աղային աղջիկը՝ Ֆաթման, տասներեք տարեկան էր, զիս շատ կը սիրէր, զիս աղջիկներուն մէջ կ'ամներ, ինքը հարս կ'ըլլար ես ալ՝ փեսայ, միւսները՝ հարսներուներ... այսպէս մէկ երկու ժամ ժամանակ կ'անցընէր, վերջը՝ «հարսնիքը վերջացաւ» կ'ըսէին, ամենքը իրենց տունները կ'երթային...:

Ֆաթման մեր գիւղի աղային միակ աղջիկն էր, յաճախ զիս կը կանչէր, կ'ըսէր՝ «երթանք պարտեզ պահուրտուք խաղանք, աչքերդ գոցէ, ես պահուրտիմ ու-ու-ու ըսեմ, աչքերդ բաց գիս փնտռէ, գտիր...» եւ այսպէս, խոտերու ու ծաղիկներու մէջ կը պառկէր, ես զինքը կը գտնէի ու հակառակը՝ ես կը պահուրտէի... այսպէս ժամերով կը խաղայինք առանձին: Աշուն եկաւ օդափոխութեան ելած մարդիկ սկսան վերադառնալ իրենց տունները, մենք մնացինք վերջաւորութեան. Սեպտեմբերի վերջը մենք ալ գացինք Տեօրթ Եոյ:

Շար. յաջորդ շաբաթ

«Զարթոնք» Հայրենիքի ՄԵջ – 62 –

Մենք Չենք Ընդունում Այդ Բաժանարար Գիծը՝ Հներ Եւ Նորեր...

Սկիզբը էջ 03

Այս առումով, այդ բաժանարար գիծն այն ժամանակ Լեւոն Տեր-Պետրոսեանն է ցոյց տուել: Այնպէս որ, ինձ համար այնքան էլ յստակ չէ այդ առաջարկի բովանդակութիւնն ու հասարակութեանն ուղղուած ակնարկները:

Փաշինեանի իշխանութիւնը ոմանց կողմէ այսօր համարուում է Թուրքիայից ու Ատրպէյճանից եկող սպառնալիքներից աւելի վտանգաւոր: Դո՛ւք եւս այդ կարծիքին էք: Ինչպէ՛ս է Հայաստանում տեղի ունենալու իշխանափոխութիւն, արդե՞օք յառաջիկայ ընտրութիւնների միջոցով դա համարում էք հնարաւոր, թե՛ ոչ:

- Նախ չի բացառուում, որ Լեւոն Տեր-Պետրոսեանն էլ է տեսնում, որ Նիկոլ Փաշինեանի իշխանութիւնը շատ լուրջ վնաս է տուել: Այն մասշտաբի, որ գուցէ իրենք էլ չեն պատկերացնում: Դրա համար պետք է ժամանակ անցնի, որ կարողանանք աւելի լաւ մարտել այդ խօսքերի իմաստն ու նշանակութիւնը: Ընտրութիւնների մասին: Միանշանակ պետք է քաղաքակիրթ ու սահմանադրական ճանապարհով փորձել իշխանութիւն փոխել: Հակառակ դէպքում մենք այդ շրջապատոյտից ուղղակի դուրս չենք գալ: Գիտե՛ք ինչ, ցաւալին այն է, որ մեր հասարակութիւնը, մեր ժողովուրդը պատերազմի պարտութեան՝ անձնատուութեան փաստաթղթին չտուեց այնպիսի արձագանք, որը կարող էր տալ արթուն հայ ժողովուրդը: Այդպիսի փաստաթուղթ ստորագրած անձը չէր կարող մէկ օրից աւել Հայաստանում ապրել: Ես կարծում եմ՝ Նիկոլ Փաշինեանն էլ մեր ազգի մասին լաւ կարծիք ունէր, որքան մենք, որովհետեւ գոնէ երեք օր չէր երեւում հրապարակում, թաքնուել էր ու մտածում էր՝ այս ազգը արժանապատուութիւն ունի ու կարող է պատասխան պահանջել: Բայց երեք օր յետոյ տեսաւ, որ չկայ նման յստակ դիրքորոշում, ազգը պառակտուած է հնի ու նորի, սելի ու սպիտակի, թալանչիների ու թալանուածների: Այս արհեստական գծերով, բնականաբար վերադարձաւ, իշխանութիւնը վերցրեց ու աւելի համարձակ է իրեն զգում:

Այս հասարակութեան հետ մենք ինչպէ՛ս պետք է գնանք ընտրութիւնների ու երկրում փոփոխութիւններ կատարենք:

- Արթնանալով՝ զարթնելով: Մեր կոչը պատահական չէ՝ արթնացի՛ր, արթնացրո՛ւ: Մենք պետք է վտանգները զգանք, մենք պետք է հասկանանք, որ պետութիւն կորցնելու լուրջ վտանգի մէջ ենք: Կարելւոր չէ, թէ ում կ'ընտրի ՀՀ քաղաքացին, կարելւոր է, որ գիտակցուած ընտրութիւն կատարի: Զգնան ժողովրդահաճ լոգուններու, Նիւթականի ու կաշառքի հետեւից: Ի վերջոյ տեսք ինչ է կատարում: Երեք հիմնական թիրախ է որդեգրում ապագային այս ուժի կողմից: Առաջինը՝ սեւերի ու սպիտակների պառակտումը, երկրորդը՝ քառք, երրորդը՝ յուսահատութիւնը: Մենք այս բոլոր փուլերով անցել ենք: Մարդիկ պետք է այդ յուսահատութեան վիճակից դուրս գան ու հասկանան, որ իրենք են այս երկրի տերը: Պետք է չսնուել կեղծ օրակարգերով:

Եւ վերջին հարցը: Ձեր կուսակցութիւնում սփիւռքի դերակատարումն ինչպիսի՞ն է: Առհասարակ, ինչ էք կարծում սփիւռքեան գործիչների հետ համագործակցութեան մասին: Ձեր կուսակցութիւնում ներկայացուածութիւն ունեն՝ սփիւռքի գործիչները: Կիսո՞ւմ են ձեր տեսակետները ու համամիտ են ձեր որդեգրած քաղաքականութեան հետ:

- Այո, Սփիւռքից մենք ունենք կուսակցական անդամներ, որոնք ՀՀ քաղաքացի



են: Ունինք նաեւ բարեկամներ եւ համակիրներ: Բնականաբար, մենք մեր ծրագրում մեծ դեր ենք յատկացրել սփիւռքահայերին, մեր հայրենակիցներին: Ի վերջոյ պետականաշինութեան մէջ իրենք կարելւոր դերակատարում ունեն եւ ունենալու են: Այդ ներուժը չօգտագործել, չօգտուել նրանց հնարաւորութիւններից, կարծում եմ՝ մեծ սխալ է: Ի վերջոյ մեր Սփիւռքի թիւն աւելի մեծ է, քան ՀՀ-ում ապրողների: Մենք պետք է յստակ կապը ստեղծել: Այն անձինք, ովքեր մեր կուսակցութեան անդամ են կամ մեր բարեկամներն են, բնականաբար ողջունում են մեր կուսակցութեան ստեղծումը, ունենք դրական արձագանքներ: Իրենք չեն ընդունում այսօրուայ իշխանութեանը, ուղղակի չեն ընդունում: Ի վերջոյ, հարցը հետեւեալն է՝ եղե՛լ է դաւաճանութիւն թէ անգործութիւն, անփութութիւն: Ինչպէս աստուածաշնչում ասում է՝ «Իր գործում թոյլ լինողը փչացնողի եղբայրն է»: Հետեւանք ի վերջոյ՝ նոյնն է: Եթէ իրենք անգամ դաւաճանութիւն չեն կազմակերպել, այլ այդպէս է եղել իրենց քառասոյն կառավարման հետեւանքով, միեւնոյնն է՝ իրենք պետք է հեռանալին:

Շնորհակալ եմ հետաքրքիր գրոյյցի համար:

ՄԱՅԱԶԴ

ԱՐԱ ԱՅԱՐՈՆԵԱՆԻ
28 Յունիս 1952- 5 Մայիս 2021



Սրտի դառն կսկիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ-հօր եւ եղբօր՝ **ԱՐԱ ԱՅԱՐՈՆԵԱՆԻ**, որ անակնկալօրէն պատահեցաւ Զորեքշաբթի, Մայիս 5-ի առաւօտեան ժ. 3:30-ին՝ իր բնակարանին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Մայիս 20-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, Պրոպէնքի Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ, 3325, N. Glenoaks Blvd., Burbank, California, որուն պիտի յաջորդէ թաղումը՝ Կլենտէյլի (Glendale) Forest Lawn գերեզմանատան մէջ, 1712 S. Glendale Ave., CA:

Սգակիրներ՝

Տիկինը՝ այրի Տիանա Ահարոնեան

Դուստրը եւ ամուսինը՝ Ռիթա եւ Անտրէ Սարուխանեաններ եւ զաւակուրք՝ Զլոին, Կապրիել եւ Զոլեթ

Որդին՝ Ալեքս Ահարոնեան

Զոյրը եւ ամուսինը՝ Արփի եւ Շահէ Կանիմեաններ,

Զրոյ որդին եւ տիկինը՝ Չոհրապ եւ Գարինէ Կանիմեաններ եւ դուստրը՝ Էրիս,

Զրոյ դուստրը՝ Օրդ. Թամար Կանիմեան,

Զրոյ որդին՝ Տոքթ. Շիրազ Կանիմեան

Աներորդին՝ Տէր եւ Տիկին Տիրան եւ Աննա Տեփանեաններ

եւ համայն Ահարոնեան, Տեփանեան, Սարուխանեան, Կանիմեան, Տարեան, Յովսէփեան, Զեյնեան, Պիլեմեան, Արթիմեան, Թամեր եւ Փոլատեան ընտանիքներն ու հարազատները:

Փոխան ծաղկեպսակի ձեր նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել «Նոր Օր» շաբաթաթերթի բարգաւաճման ֆոնտին:



Ինչո՞ւ Արուեստ

ՊԻԱՆՔԱ ՍԱՐԸԱՍԼԱՆ

Յաճախ կ'ըսուի, թե մարդ էակը միայն միս է ու ոսկոր է կազմուած չէ, այլ՝ ունի նաեւ հոգի եւ միտք: Մարդ ինչպէս իր մարմնաւոր եղութիւնը պահպանելու համար կարիքն ունի սնունդի, այնպէս ալ միտքն ու հոգին կարիքն ունին սնունդի՝ իմացական եւ զգացական «առողջութիւն»ը պահելու համար:

Ինչո՞ւ կան երաժշտութիւնը, նկարչութիւնը, քանդակագործութիւնը, շարժարուեստը, գրականութիւնը... Ի՞նչ օգուտ ունին: Անոնք ինչպէ՞ս կը լրացնեն մարդկային հոգւոյ դատարկութիւնները...

Արուեստագետի մը համար արուեստը կրնայ ըլլալ միայն ապրուստի միջոց, սակայն արուեստի «սպառողներու» համար անբաղդատելի նշանակութիւն կ'ունենան իր «արտադրածները»: Այսօր արուեստի մասին շատերու հայեացքը կը նմանի առանց ելեկտրականութեան տան մէջ գտնուող հեռատեսիլի մը: Առաւօտեան ժամը 6-ին տունէն դուրս ելլելով, երեկոյեան ժամը 11-ին տուն վերադարձողներու, իրենք իրենց համար ժամանակ խնայելու առիթ չունեցողներու, աշխարհը «կոյր աչքերով» դիտողներու համար արուեստը անհրաժեշտութիւն չէ: Անոնցմէ շատեր չեն գիտակցիր արուեստի նշանակութեան, իմաստին, հաղորդածներուն, արձագանգածներուն... Ըստ անոնց, արուեստը «դատարկ գործ» է:

Արուեստը կայ եւ կը շարունակէ մարդկութեամբ: Մարդիկ պատերու, աւազի, քարերու եւ այլնի միջոցաւ պատմած են իրենց կեանքի մասին: Մարդիկ արուեստի միջոցաւ կ'արտայայտեն այնպիսի յոյզեր, մտածումներ, փորձառութիւններ, զորս անոնք չեն կրնար միայն բառերով արտայայտել:

«Արուեստը կայ, քանի որ աշխարհը կատարեալ տեղ մը չէ», ըսած է յայտնի բեմադրիչ Թարթուլսքի: Լաւ, գեղեցիկ բան մը տեսնել կամ ունկնդրել ձեռով մը կը թեթեւցնէ մեր տառապանքները, կը հանգստացնէ մեր հոգին, ներաշխարհը... Արուեստը մարդու հոգին կը սնուցանէ՝ որպէս մարդու յոյզերու, գաղափարներու արտայայտութեան, արտացոլման միջոց: Արուեստը թէ՛ «արտադրողներու» եւ թէ՛ «սպառողներու» համար իրենց մտատանջութիւններէն, ճնշուածութիւններէն ազատելու միակ ելքի ճանապարհն է:

Արդարեւ, արուեստագետներ զգացական խորութեան տեր են եւ ունին զգայնութիւն ու այս բոլոր յատկութիւնները իրենց ստեղծագործութիւններուն վրայ ցոլացնելու հմտութիւն: Արուեստագետները իսկապէս կը գտնեն եւ կը բացայայտեն կեանքի այն «մեղեդի»ները, որոնց մարդ չի կրնար անդրադառնալ, զորս չի տեսներ կամ չի նկատեր: Արուեստը կը փոխէ եւ կը հարստացնէ աշխարհը զգալու ձեւը: Առանց արուեստի իմաստ մը պիտի չունենար ընկերային կեանքը եւ անտանելի պիտի ըլլային մարդկային ներաշխարհը ձեւաւորող բոլոր ապրումները, զգացումները, երեւոյթները:

Ինչո՞ւ մեզի պէտք է արուեստը:

Արուեստը մեզի պէտք է հասկնալու եւ պատմելու, տեսնելու եւ ցոյց տալու, լսելու եւ արձագանգելու համար: Արուեստը խառն ու տարբեր յոյզերու ամփոփումն է: Երաժշտութիւնը, նկարչութիւնը քանի մը երկվայրկեանի ընթացքին կրնան արթնցնել մեր յիշողութեան խոր անկիւնները թաքնուած յուշերը, զգացումները: Այն ինչ որ



արուեստի միջոցով կ'արտայայտուի եւ կը ցոլանայ, զգացումներու անկեղծ եւ իսկական արտայայտութիւնն է: Մարդոց զգացումները, ընդհանուր առմամբ, երբ անկեղծ են, անոնց մարմնաւորումը՝ արուեստը ձեռով մը կը համարուի իրականութեան հայելին, ճշմարտութեան արտացոլումը: Արուեստագետը նաեւ իր ապրած ժամանակաշրջանի պայմանները, ապրումները, երբեմն դիրքորոշումները կ'արտայայտէ իր «արտադրած» արուեստով:

Արուեստը գոյութիւն ունի ցոյց տալու համար, թէ կեանքը շատ անելի ընդարձակ է, քան մենք կը տեսնենք, կ'ընկալենք կամ կը պատկերացնենք: Կարճ խօսքով, կեանքը ենթակայականի եւ առարկայականի միջեւ փոխարաբերութիւն է եւ սա կը պայմանաւորուի հինգ զգայարաններու խառնուրդով: Այսինքն՝ մենք կը ճանապարհորդենք մեր երեւակայութեան, յիշողութեան խոր անկիւնները, երբ կը տեսնենք հաճելի, գեղեցիկ բան մը: Մտածումներ, զգացումներ, դիտարկումներ, ընկալումներ ներառող արուեստի տիեզերքի մէջ կարելի չէ սահմաններ հաստատել եւ ըսել, թէ այն դռներ կը բանայ միայն նիւթական աշխարհի: Բարձրագոյն նպատակը, որուն արուեստը կրնայ ծառայել՝ այն է, որ մարդիկ անելի մանրամասն հասկնան կեանքը եւ խորաթափանցեն այլ մարդոց զգացումներուն, ապրումներուն եւ անելի ու անելի սիրեն կեանքը: Արուեստի նպատակն է մեր հոգիներէն վերցնել, մաքրել առօրեայ կեանքի փոշին: Արուեստի նպատակն է ներկայացնել ո՛չ թէ իրերու կամ մարդոց արտաքին տեսքը, այլ անոնց ներքին կարեւորութիւնը:



Պաշտօնեայ Կ'ուզուի

Կ'ուզուի վարպետ ոսկերիչ, աղա-մանդաշար եւ փայլեցնող, ինչպէս նաեւ հաշուապահուի կամ օգնա-կան:

Հեռաձայնել. 01-266514 կամ 03-207772

ԲԱՆ ՈՒ ԳԻՐ

Ասում են, թէ Դաւիթ Բեգի բերդն է այն՝ Արծիւների բներից վեր անվեհեր, Ինձ թւում է, թէ նա բերդն է Սասնոյ տան Ու Սասունցի Դաւիթն է դեռ այնտեղ տեր:

Ոչ, եղել եմ այս լեռներում բիւր անգամ, Ինչ անուն էլ որ փոփոխեն օրից-օր Այս լեռներում ես եղել եմ ու կը գամ Կը մանկանամ որ մեծանամ նորից նոր:

ՎԱՐԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՏ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ

10 2021
ՄԱՅԻՍ

Կրկ	Երկ	Երեք	Չորեք	Հինգ	Ուրբ	Շաբ
						1
2	3	4	5	6	7	8
9	10	11	12	13	14	15
16	17	18	19	20	21	22
23	24	25	26	27	28	29
30	31					



ԲԱՋԱՂ
(1924 – 2004)
«Բնանկար»



ՀԱՌԻԸՐՏ ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ

Հասարակությունը իր բժշկական
եւ ընկերային ծառայություններու
կողքին ի գործ դրած է նաեւ «ՓԱՐՈՍ 2»
ծրագիրը: Այս ծրագրին հիմնական նպատակն է,
այցելել այն հայորդիներուն բնակարանները,
որոնք ֆիզիքապէս անկարող են պոնէն դուրս
գալու եւ անոնց ապահովել բժշկական անմիջա-
կան խնամք:

Բոլոր անոնք, որոնք կարիքը ունին այս ծառայութեան կամ
յաւելեալ մանրամասնութեան կրնան կապ հաստատել
Տիկ. Շողակաթ Սլիխանեան-Մուրատեանին հետ՝

☎ 01/258 717 📞 78/968 169

ամէն օր առաւօտեան ժամը 8:00–4:00:

ՏԵՕՐԵՆՈՒԹԻՒՆ

Հետեւեցէք մեզի՝

f Karagheusian Association

📷 KaragheusianAssociation